

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007Թ. ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N320 ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ /ԴԻՊԼՈՄԻ/ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ
ԼՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՅԱՆԳՉԱԿԱՆ ՆԱՄԱԿ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույնով սահմանվում է ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում(այսուհետ՝ Բուհեր) բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (այսուհետ՝ Դիպլոմ) միասնական հավելվածի հատկացման և լրացման կարգը:

1.2. Բարձրագույն մասնագիտական կրթության Դիպլոմի միասնական հավելվածը Բուհերի շրջանավարտներին տրվում է պետական հավատարմագրում ստացած մասնագիտությունների գծով:

1.3. Բուհերում սահմանվում է Դիպլոմի միասնական հավելված հետևյալ որակավորումների համար՝

§ բակալավր

§ դիպլոմավորված մասնագետ

§ մագիստրոս (օրդինատոր)

1.4. Բարձրագույն մասնագիտական կրթության Դիպլոմի միասնական հավելվածը պետք է կցված լինի Դիպլոմին, քանի որ այն վավեր է միայն Դիպլոմի հետ և չի կարող փոխարինել Դիպլոմին:

2. Դիպլոմի միասնական հավելվածի հատկացումը

2.1. Դիպլոմի միասնական հավելվածը անվճար տրվում է Բուհերի այն շրջանավարտներին, ովքեր սահմանված կարգով անցել են ամփոփիչ ատեստավորում և ստացել են Դիպլոմ:

2.2. Դիպլոմի միասնական հավելվածը Բուհերի շրջանավարտներին տրվում է Դիպլոմի հետ միասին՝ 2007/2008 ուսումնական տարվանից:

2.3. Դիպլոմի միասնական հավելվածը կորցրած շրջանավարտներին, սահմանված կարգով, տրվում է կրկնօրինակ՝ Բուհի արխիվում մասնագիտության ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների քննական և ստուգարքային

տեղեկագրերի, պետական քննական հանձնաժողովների որոշումների արձանագրությունների և այլ փաստաթղթերի (Դիպլոմների գրանցման մատյան, շրջանավարտների հաստատված ցուցակ և այլն) առկայության դեպքում:

2.4. Դիպլոմի միասնական հավելվածի կորցրած կրկնօրինակը հատկացվում է բուհի կողմից սահմանված կարգով, վճարովի հիմունքներով: Կրկնօրինակում, Դիպլոմի միասնական հավելված բառի վրա պարտադիր է «Կրկնօրինակ» նշադրումը:

3. Դիպլոմի հավելվածի լրացումը

3.1. Դիպլոմի միասնական հավելվածը լրացվում է Բուհի կողմից համակարգչային տպատառերով մշակված ձևաչափով: Դիպլոմի հավելվածի բոլոր ութ բաժինները լրացվում են հայերեն և անգլերեն լեզուներով: Դիպլոմի հավելվածի բաժիններից որևէ մեկում տեղեկատվության բացակայության դեպքում ներկայացվում է պատճառը:

3.2. Դիպլոմի միասնական հավելվածը լրացվում է հետևյալ կարգով.

Դիպլոմի հավելվածի կետ 1-ում լրացվում են տեղեկություններ որակավորում ստացած անձի մասին

1.1 անունը, հայրանունը, ազգանունը գրանցվում են դիպլոմում նշված տվյալների հիման վրա,

1.2 նշվում են այլ անունները, եթե դրանք մեկից ավելին են,

1.3 նշվում է ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը:

3.3. Դիպլոմի հավելվածի կետ 2-ում լրացվում են տեղեկություններ Բուհիկողմից շրջանավարտին շնորհված որակավորման մասին:

2.1 Լրացվում է որակավորման լրիվ անվանումը հայերեն լեզվով, իսկ անգլերեն օրինակում՝ բնագիր անվանումը անգլերեն տառերով այնպես, ինչպես նշված է Դիպլոմում (Chartaragitutyan Bakalavr): Եթե տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչը նախատեսում է նաև որակավորման յուրահատուկ մասնագիտական իրավասություններ, ինչպես օրինակ՝ ֆրանսերենի ուսուցիչ, ապա պետք է լրացնել նաև այդ անվանումը: Դիպլոմի միասնական հավելվածում համապատասխան նշում է կատարվում որակավորման միացյալ աստիճան լինելու դեպքում:

2.2 Նշվում է ուսումնառության հիմնական ոլորտը (ոլորտները), օրինակ՝ քաղաքագիտության պատմություն, բիզնեսի կառավարում և այլն:

2.3. Նշվում է շնորհող հաստատության լրիվ անվանումը այնպես, ինչպես նշված է Դիպլոմում, իսկ անգլերեն օրինակում՝ բնագիր անվանումը անգլերեն տառերով: Այն դեպքում, երբ աստիճանը շնորհվում է երկու կամ ավելի Բուհերի կողմից, Դիպլոմի միասնական հավելվածում նշվում են շնորհող հաստատությունների անվանումները, և որտեղ է ձեռք բերվել որակավորման հիմնական մասը: Այս մասում նշվում է որակավորումը շնորհած Բուհի կարգավիճակը՝ հավատարմագրված լինելու հանգամանքը:

Օրինակ՝ /Բուհի անվանումը/ ոչ պետական /պետական համալսարան/ ոչ համալսարանական տիպի հաստատություն է, որը /նշել ամսաթիվը/ բավարար արդյունքներով անցել է որակի արտաքին ապահովումը /երկրի անվանումը/-ում:

2.4 Նշվում է այն հաստատության անվանումը և գտնվելու վայրը, որը իրականացնում է ուսումնական ծրագիրը (հնարավոր է, որ հաստատությունները տարբերվեն): Որակավորումը շնորհող և ուսումնական ծրագրերն իրականացնող Բուհերի տարբեր լինելու դեպքում, նշվում է երկու հաստատությունների կարգավիճակը:

2.5 Նշվում է այն լեզուն(ները), որով իրականացվել է ուսուցումը և քննությունները:

3.4. Դիպլոմի միասնական հավելվածի կետ 3-ում նշվում են տեղեկություններ որակավորման մակարդակի մասին:

3.1 Նշվում է որակավորման ստույգ մակարդակը և դրա տեղը ազգային որակավորումների համակարգում: Այս բաժնում նաև նշվում է որակավորմանն առնչվող ազգայնորեն մշակված և հաստատված ազգային չափորոշիչների, մակարդակի նկարագրիչների վերաբերյալ տեղեկատվություն:

3.2 Նշվում է ուսումնական ծրագրի պաշտոնական տևողությունը՝ շաբաթներով կամ տարիներով ներառյալ՝ տեղեկություններ մասնագիտական ցանկացած ենթաառարկաների, ինչպես օրինակ՝ գործնական ուսուցման, լսարանային աշխատանքների վերաբերյալ: Ուսումնական բեռնվածությունը ներկայացվում է հաշվի առնելով ուսանողի ամբողջ ծանրաբեռնվածությունը, որը ենթադրում է ծրագրի համար հատկացված ժամանակը, ներառյալ՝ դասաժամերը, անհատական պարապմունքները և քննությունները: Ուսանողի ուսումնական բեռնվածությունը հնարավորության դեպքում արտահայտվում է կրեդիտներով:

3.3 Նշվում է տվյալուսումնական ծրագրում ընդգրկվելու համար պահանջվող որակավորման(ների) բնույթը և նրա տևողությունը:

3.5. Դիպլոմի միասնական հավելվածի կետ 4-ում լրացվում է տեղեկությունն որակավորման բովանդակության և ձեռքբերված արդյունքների մասին:

4.1 Նշվում է ծրագրի ուսուցման ձևը՝ առկա, հեռակա, հեռավար և դրսեկության:

4.2 Նշվում են այն նվազագույն պահանջները, որոնք անհրաժեշտ են որակավորումն ապահովելու համար, օրինակ՝ պարտադիր բաղադրիչները կամ պարտադիր գործնական տարրերը, թեզի հետ կապված կանոնակարգերը: Առկայության դեպքում, անհրաժեշտ է նշել մանրամասներ ուսումնական արդյունքների, կարողությունների, հմտությունների և նպատակների վերաբերյալ, որոնք առնչվում են որակավորման հետ:

4.3 Նշվում են ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների անվանումները, կրեդիտները և գնահատականները: Այն դեպքում, երբ Որակավորումը շնորհվել է երկու և ավելի Բուհերի կողմից, Ցավելվածում նշվում է յուրաքանչյուրում անցած առարկան՝ կողքը նշելով Բուհի անվանումը:

Այն հատատությունները, որոնք դեռևս չեն կիրառում կրեդիտային համակարգ այս մասում կարող են ընդգրկել յուրաքանչյուր առարկայից ստացված գնահատականները իրենց ժամաքանակների հետ, քննությունների արդյունքները, ինչպես նաև տեղեկություններ թեզի վերաբերյալ:

Եթե որակավորումը միասնական աստիճան է, ապա պետք է նշել յուրաքանչյուր հաստատությունում ձեռք բերված մասը:

4.4. Տրվում է տեղեկություն որակավորմանն առնչվող գնահատման համակարգի և նվազագույն անցողիկ գնահատականների վերաբերյալ: Եթե գործածվում է մեկից ավելի գնահատման համակարգ, օրինակ՝ միացյալ աստիճանաշնորհման ժամանակ, ապա տեղեկատվությունը տրամադրվում է բոլոր գործածված գնահատման համակարգերի վերաբերյալ:

4.5 Նշվում է որակավորման համընդհանուր դասակարգումը, ինչպես օրինակ՝ Դիպլոմ, Գերազանցության դիպլոմ, և այլն:

3.6. Դիպլոմի միասնական հավելվածի կետ 5-ում լրացվում են տեղեկություններ որակավորման գործառույթի մասին:

5.1 Նշվում է տվյալ որակավորման ընձեռած հետագա ակադեմիական և

մասնագիտական հնարավորությունները ՀՀ-ում: Այն դեպքում, երբ որակավորումը տալիս է միայն մասնագիտական աշխատանքի իրավունք, ապա նշվում են այն պահանջները, որոնց բավարարելու դեպքում հնարավոր է հետագա ուսումնառությունը:

5.2 Նշվում է որակավորում ստացողի մասնագիտական գործունեությամբ զբաղվելու պահանջները և առանձնահատկությունները: Այն դեպքում, երբ որակավորումը հնարավորություն է ընձեռում զբաղվել մասնագիտությամբ, որը պաշտպանված է օրենքով /կանոնակարգվող/, նշվում է այդ իրավունքը շնորհող լիազոր մարմինը և շնորհվող մասնագիտական իրավունքները:

3.7 Դիպլոմի միասնական հավելվածի կետ 6-ը նախատեսված է լրացուցիչ տեղեկությունների համար, որոնք տեղ չեն գտել նախորդ բաժիններում:

6.1 Այս բաժնում տրվում են լրացուցիչ տեղեկություններ որակավորման նպատակի, մակարդակի և ընձեռած հնարավորությունների մասին, օրինակ՝ որակավորման ձեռքբերման ընթացքում որոշ ժամանակ ուսումնառությունը անց է կացվել մեկ այլ ԲՈՒՀ-ում/ընկերությունում/երկրում, կամ ընդգրկել լրացուցիչ մանրամասներ ԲՈՒՀ-ի մասին: Որակավորումը երկու և ավելի ԲՈՒՀ-երի կողմից շնորհվելու, կամ տրանսազգային / առանց սահմանների կրթության կազմակերպմամբ ստանալու դեպքում նշվում են լրացուցիչ մանրամասներ կրթության կազմակերպման վերաբերյալ:

6.2 Հավելվածի վեցերորդ մասի երկրորդ բաժնում նշվում են շնորհող ԲՈՒՀ-ի, համապատասխան ֆակուլտետի, ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի անվանումները, հասցեները, հեռախոսահամարները և ինտերնետային կայքի հասցեները, որը նախատեսված է տվյալ որակավորման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու համար:

3.8. Դիպլոմի միասնական հավելվածի կետ 7-ը նախատեսված է Հավելվածի վավերականացման համար: Այս մասում նշվում է Հավելվածի հատկացման ամսաթիվը, այն վավերացնող պաշտոնյայի անունը և ստորագրությունը, վավերականությունը հաստատող Բուհի պաշտոնական հասցեն և կնիքը:

3.9. Դիպլոմի միասնական հավելվածի կետ 8-ում նկարագրվում է բարձրագույն կրթության ազգային համակարգը՝ մշակված ՀՀ Ակադեմիական փոխճանաչման և

շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի կողմից /կցվում է հայերեն և անգլերեն լեզուներով/:

Նախարար՝

Լ.Մկրտչյան

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՉԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում այսօր գործում են 22 պետական և 73 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, այդ թվում՝ 34 հավատարմագրված, 31 չհավատարմագրված, 3 ԱՊՀ – անդամ երկրների պետական բուհերի և 5 ոչ պետական բուհերի մասնաճյուղեր: Բարձրագույն կրթական ծրագրերով ուսուցումը իրականացվում է ինստիտուտներում, համալսարաններում, ակադեմիաներում և կոնսերվատորիայում:

Բարձրագույն կրթության որակավորումներ

Բարձրագույն կրթության շրջանակներում իրականացվում է բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորմամբ մասնագետների, ինչպես նաև հետբուհական՝ հետազոտողի, գիտությունների թեկնածուի պատրաստումը:

Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը իրականացվում են ուսուցման տարբեր ձևերով՝ առկա(ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) կամ դրսեկության (էքստեռնատի): Ուսումնական տարին, որպես կանոն, սկսվում է սեպտեմբերի 1-ին և կազմված է 2 կիսամյակից՝ 20 և 22 շաբաթ համապատասխան տևողությամբ:

Բակալավր որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիրն ընդգրկում է ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական ու բնագիտական, և հատուկ մասնագիտական պարտադիր դասընթացներ ու պրակտիկա, ինչպես նաև կարող է ներառել ընտրովի և ֆակուլտատիվ դասընթացներ: Բարձրագույն ուսումնական հաստատություններում

ընդունելությունը բարձրագույն կրթության առաջին աստիճանում՝ բակալավրիատում կատարվում է առնվազն միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ավարտական վկայականի հիման վրա: Ուսուցման ժամկետն առնվազն 4 տարի է, բժշկական մասնագիտությունների համար՝ առնվազն 5 տարի: Ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ և ավարտական աշխատանքի պաշտպանությամբ, որոնց դրական արդյունքների հիման վրա շնորհվում է բակալավրի որակավորում: Որակավորումը թույլ է տալիս աշխատել ըստ մասնագիտության (բացառություն են կազմում բժշկական մասնագիտությունները) և շարունակել կրթությունը հաջորդ փուլում՝ մագիստրատուրայում:

Դիպլոմավորված մասնագետի (2008-

2009 ուսումնական տարում բուհերը կտան այս ծրագրով ընդունված վերջին շրջանավարտները) որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիրն ընդգրկում է հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական ու բնագիտական, ընդհանուր մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև շրջանավարտներին տալիս է տարբեր տեսակի մասնագիտական հմտություններ, գործունեությանը նախապատրաստող մասնագիտացման տեսական ու գործնական դասընթացներ : Ուսուցման ժամկետն առնվազն 5 տարի է, իսկ արվեստի և ֆիզիկական կուլտուրայի մասնագիտությունների համար՝ 4 տարի: Ծրագիրն ավարտվում է ատեստավորմամբ, ներառյալ՝ դիպլոմային աշխատանքի պաշտպանությամբ, որոնք հաջող անցնելու դեպքում շնորհվում է դիպլոմավորված մասնագետի որակավորում: Այն թույլ է տալիս շարունակել կրթությունը հաջորդ փուլում՝ ասպիրանտուրայում:

Մագիստրոսի որակավորման աստիճանը շնորհվում է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ երկամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքի հիման վրա: Մագիստրոսի ծրագրով կրթված շրջանավարտը ունի մասնագիտական հիմնարար պատրաստվածություն, գիտահետազոտական և գիտամանկավարժական աշխատանքի, կառավարման, մասնագիտության մեջ ինքնուրույն կատարելագործվելու համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Այն թույլ է տալիս շարունակել կրթությունը հաջորդ փուլում՝ ասպիրանտուրայում՝ դիմորդների մրցույթային ընդունելության քննությունների

արդյունքների հիման վրա:

Չետագոտող՝ հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ ասպիրանտուրայում եռամյա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքում:

Գիտությունների թեկնածու հետբուհական որակավորման աստիճանում կարող են սովորել դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձիք: Ասպիրանտուրան նպատակաուղղված է անձի տեսական մասնագիտական գիտելիքները խորացնելուն և ինքնուրույն գիտական ատենախոսություն պատրաստելու հմտություններ ձեռք բերելուն: Ասպիրանտը երեք տարի ուսանելուց, անալիտիկ մտածելակերպ ցուցաբերելուց և գիտական ատենախոսությունը պաշտպանելուց հետո կստանա գիտությունների թեկնածու գիտակրթական աստիճանը:

Գիտությունների դոկտոր՝ գիտական աստիճան, որը շնորհվում է գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող անձանց՝ իրենց հետագա գիտական գործունեության արդյունքում՝ ատենախոսությունը պաշտպանելուց հետո:

Որակի ապահովում:

Որակի ապահովման գործող համակարգը հավաստում է կրթության որակը հիմնվելով պետական կրթական չափորոշիչների և հավատարմագրման չափանիշների վրա: Հավատարմագրման վկայականը շնորհվում է կրթական ծրագրի որակի գնահատման ընթացիկ արդյունքների, հավատարմագրում իրականացնող կազմակերպության կողմից տրված եզրակացության և երկու տարի անընդմեջ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքների հիման վրա: Բուհերի և դրանց մասնագիտությունների հավատարմագրման գործընթացը իրականացնում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության հատուկ ստորաբաժանումը՝ Լիցենզավորման և հավատարմագրման գործակալությունը: Հավատարմագրման առաջին փուլը իրականացվել է 2001թ.:
Համաձայն «Կրթության մասին» օրենքի պետական մարմինների և պետական ոչ

առևտրային կազմակերպությունների համար բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթուղթն է, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

8. INFORMATION ABOUT THE NATIONAL HIGHER EDUCATION SYSTEM

At present 22 state and 73 private higher education institutions are operating in the Republic of Armenia, of which 34 are accredited institutions, 31 – non-accredited, 3 branches of the HEI from the CIS countries and 5 branches – of the private HEI of the CIS countries. Higher Education is provided by many types of institutions: institutes, universities, academies and conservatory.

Higher Education Qualifications

Preparation of specialists with Bachelor's, Diploma Specialist and Master's qualifications as well as post graduate studies – researcher and candidate of sciences is implemented within the framework of the Higher Education.

The main education programs of the higher professional education are conducted through various types of teaching: full-time, part-time, distant or extern education. The academic year, as a rule, starts in September 1st and is comprised of 2 semesters with 20 and 22 weeks duration, respectively.

The main education program for preparing specialists with Bachelor's qualification includes required courses and practice of general humanities and social- economic, mathematics and natural sciences, and special professional disciplines, as well as may contain elective and optional courses. To enter the first degree of higher education, i.e. Bachelor's degree, at higher education institutions, applicant should have at least (full) secondary general education graduation certificate. The duration of study is at least 4 years, for medical specializations – 5 years. The program ends with summative assessment and final paper defence, and the Bachelor's qualification is awarded in case of its success. The awarded qualification gives a right to practice the specialization (except medical specializations) and

continue the education in the next cycle – Master's studies.

The main education program preparing specialist with Specialist Diploma (the last graduates of this program will finish their studies at the higher education institutions in 2008-2009 academic year) qualification includes courses of general humanities and social-economic, mathematics and natural sciences, and special professional disciplines, as well as provides graduates with various types of professional skills and specialized theoretical and practical courses preparing for the occupational activity. The duration of study is at least 5 years, and for the arts and physical training professions it lasts 4 years. The program ends with testing, including defending of diploma thesis, and the qualification of Diploma Specialist is awarded in case of its success. It gives the access to continue education in the next cycle – post graduate Doctorate (Aspirantura) studies.

Master's qualification is awarded to persons holding Bachelor's or Specialist Diploma degree based on the test results of a 2-year higher professional education program. Graduates completing Master's program are fundamentally prepared and have knowledge, capacities and skills necessary for scientific-research and scientific-pedagogical activity, management and self-improvement of their profession independently. It gives the access to continue education in the post graduate Doctorate (Aspirantura) studies based on the results of the entry examinations of applicants.

Post higher professional education qualification of Researcher is awarded to graduates holding Master's or Specialist Diploma degree as a test result of a 3-year post higher professional education program.

Graduates holding Specialist Diploma or Master's degrees may study in the Candidate of Sciences post graduate qualification degree. The post graduate study is targeted at expanding theoretical professional knowledge of persons and obtaining skills to prepare a scientific thesis independently. Upon the completion of a 3-year post graduate studies, demonstration of analytical thinking and scientific thesis defence, scientific and educational degree of Candidate of Sciences will be awarded to graduates.

Doctor of Sciences is a scientific degree which is awarded to persons holding a degree of

Candidate of Sciences as a result of their further independent scientific activity, after successful thesis defence.

Quality Assurance

The existing Quality Assurance system verifies the education quality based on the state educational standards and according to the accreditation criteria. The accreditation certificate is awarded based on the current results of the education program quality assessment, the conclusion submitted by the accrediting organization and the positive results of summative tests of graduates for two years uninterruptedly. The accreditation process of HEIs and their specializations is conducted by the special Department of the RA Ministry of Education and Science – the Licensing and Accreditation Agency. The first phase of accreditation was performed in 2001.

According to the RA Law on Education, for the state bodies and state non-commercial organizations the document verifying higher education is the final academic document provided by the state or accredited private higher education institutions, if nothing else is stipulated by the Law.